# ՀՈՐԻԶՈՆ 40

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 41 / No.48-49 (2130-2131), 8+4+4+16 էջ / $1.75

ԱՊՐԻԼ 27-ՄԱՅԻՍ 4 / 27 AVRIL-4 MAI / 27 APRIL-4 MAY 2020







## Հայ Դատի Յանձնախումբին եւ Գանատահայութեան Ուղղուած Իր Ուղերձին Մէջ Վարչապետ Թրուտօ Խստօրէն Կը Դատապարտէ Հայոց Ցեղասպանութիւնը



Ոգեկոչելով Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակին նուիրուած ՀՅԴ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպած առցանց ոգեկոչումը, Գանատայի Վարչապետ Ճասթին Թրուտօ տեսանիւթով ներկայացուած յատուկ ուղերձով մը խստօրէն դատապարտեց Օսմանեան Թուրքիոյ կողմէ գործադրուած Հայոց Ցեղասպանութիւնը եւ անգամ մը եւս վերահաստատեց Գանատայի պետութեան հաստատ կեցուածքը այս ուղղութեամբ։

Իր խօսքին մէջ, վարչապետը կարեւորեց մարդկութեան դէմ գործուած այս ոճիրը յիշելու եւ յիշեցնելու կարեւորութիւնը, յարգելով Հայոց Ցեղասպանութեան 1,5 միլիոն նահատակներու յիշատակը։ Ան նաեւ շեշտեց, որ աւելի քան հարիւր տարի առաջ գործուած այս ոճիրը պէտք է յիշեցնէ համայն մարդկութեան, որ անտարբեր ու լուռ չմնան ատելութեան, խտրութեան եւ վայրագութեան արարքներու դիմաց։

Ան իր խօսքը եզրափակեց ըսելով, որ Գանատան երբեք պիտի չմոռնայ եւ միշտ պիտի յիշէ Հայոց Ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակը։

Հարկ է նշել, որ Վարչապետ Թրուտոյի այս տարուան ուղերձը ամենէն դիւրուկ եւ յանցագործն ու յանցագործութեան նպատակը յստակօրէն նշող ուղերձն էր, որ երբեւէ հնչած է Գանատայի վարչապետի մը կողմէ։

## ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոն իր մտահոգութիւնն է յայտնում ՝ Արցախի հիմնահարցի խաղաղ կարգաւորման բանակցութիւնների այս փուլի մասին Ռուսաստանի Դաշնութեան արտգործնախարարի այսօրուան արտայայտած մօտեցումների կապակցաբար։ Հ.Յ.Դ. Բիւրոն նաեւ մտահոգութիւնն է յայտնում, որ ՌԴ արտգործնախարարի այդ յայտարարութիւնը կատարուել է Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետութիւնների արտգործնախարարների հեռավար հանդիպումից ընդամէնը ժամեր առաջ։

Յանկացած կարգաւորման բանաձեւի մէջ առաջնայինը պէտք է լինի Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումը։ Իսկ կողմերի միջեւ ցանկացած համաձայնութիւն պէտք է լինի համարժէք եւ միաժամանակեայ։

Ուղղակի անհրաժեշտութիւն է յստակ հայեցակարգի վրայ հիմնուած աշխատանքների իրականացումը, այդ թւում Արցախի Հանրապետութեան հետ ՀՀ-ի ռազմաքաղա-


Բիւրօ… Շար. էջ 3




Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան, Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակին Առիթով, ապրիլ 24ին Ծիծեռնակաբերդի բարձունքէն ուղերձ յղեց։ Կարդալ էջ 3։

## Գանատայի Պաշտօնական Ընդդիմութեան Ղեկավար՝ Անտրու Շիր Կը Վերահաստատէ Պահպանողական Կուսակցութեան Սկզբունքային Կեցուածքը Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման Նկատմամբ



Ապրիլ 24-ին, Հայոց Ցեղասպանութեան 105ամեակին առիթով, Գանատայի Ընդդիմութեան եւ Պահպանողական Կուսակցութեան ղեկավար՝ Անտրու Շիր, Գանատայի Հայ Դատի յանձնախումբին ուղղուած իր ուղերձին մէջ անգամ մը եւս վերահաստատեց իր կուսակցութեան վճռակամ դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ։

Շիր նշած է, որ Գանատայի Պահպանողական կուսակցութիւնը միշտ պիտի կանգնի Հայ ժողովուրդին եւ արդարութեան կողքին եւ պիտի ընէ իր կարելին, որ նման յանցագործութիւններ ճանաչում ստանան եւ երբեք չկրկնուին։



Հայոց Ցեղասպանութեան 105-ամեակը Գանատայի մէջ ոգեկոչուեցաւ առցանց։ Կարդալ էջ 5։





Al★Nejmah
MIDDLE EASTERN SUPERMARKET
NOW OPEN
Սեփականատէր
Յարութ Սիփան
Ընտանեկան բացառիկ գործառնութիւն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ
IN HOUSE
COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON
Սուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն
Supermarket | Restaurantl I Bakery I Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ
PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga

# Նիկոլ Փաշինեանի Ծիծեռնակաբերդէն Յղած Ուղերձը՝ Ցեղասպանութեան 105-ամեակին Առիթով

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան 24 ապրիլին Ծիծեռնակաբերդի բարձունքէն հետեւեալ ուղերձը յղեց.

*«Այսօր՝* 2020 *թուականի Ապրիլի* 24*-ին Հայոց ցեղասպանութեան* 105*-րդ տարելիցն է։ Օսմանեան Թուրքիայի՝ երկար տարիների հայատեաց քաղաքականութիւնը* 1915 *թուականին, երիտթուրքերի կառավարութեան օրօք, հասաւ գագաթնակէտին։*

*Տարիներ տեւած եւ պետական որոշմամբ իրականացուած ցեղասպանութեան հետեւանքով Արեւմտեան Հայաստանն ամբողջութեամբ հայաթափուեց.* 1,5 *միլիոն մեր հայրենակիցները սպաննուեցին, հարիւր հազարաւոր հայեր դարձան գաղթական, զրկուելով իրենց պատմական հայրենիքում ապրելու իրաւունքից։*

*Հայոց ցեղասպանութեան՝ Մեծ Եղեռնի հետեւանքով հայ ժողովուրդը ոչ միայն ահռելի մարդկային կորուստներ կրեց, այլեւ ենթարկուեց հայրենազրկման եւ մշակութային ջարդի։ Անդառնալի էին մեր ժողովրդի հոգեւոր եւ կրօնական ժառանգութեան կորուստները, հսկայական էին նրա նիւթական վնասները։ Օսմանեան կայսրութեան իշխանութիւնների իրականացրած Հայոց ցեղասպանութիւնը ոչ միայն մեր ժողովրդի ինքնութեան, այլեւ ողջ մարդկային քաղաքակրթութեան դէմ ուղղուած յանցագործութիւն էր։*

*Իսկ* 1915 *թուականի Ապրիլի* 24*-ը դարձաւ այս ողջ գործընթացի ամենաուժեղ խորհրդանիշը, որովհետեւ այդ օրը հարիւրաւոր հայ մտաւորականներ, կրօնական ու քաղաքական գործիչներ, երիտթուրքերի կառավարութեան հրամանով, ձերբակալուեցին, աքսորուեցին, սպաննուեցին կամ անհետ կորան։*

*Արդէն* 55 *տարի Ապրիլի* 24*-ին մենք ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը։ Առաջին անգամ* 1965 *թուականին էր, երբ հազարաւոր հայեր մայրաքաղաք Երեւանում այդ օրը յիշատակի զանգուածային միջոցառում իրականացնելու հնարաւորութիւն ստացան։ Եւ սա կապուած էր ոչ միայն Խորհրդային Միութիւնում «ջերմացման ժամանակաշրջանի», այլեւ այն փաստի հետ, որ* 1946-49 *թուականներին շուրջ հարիւր հազար հայեր, հիմնականում Հայոց ցեղասպանութեան զոհերի յետնորդներ, հայրենադարձուեցին Հայաստան, դարձան Խորհրդային Հայաստանի լիարժէք մասը, բորբոքելով այստեղ անթեղուած ցաւը, յիշողութիւնը, կարօտը։*

*Խորհրդային Հայաստանի իշխանութիւնն Ապրիլի* 24*-ը ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր յայտարարելու եւ Ծիծեռնակաբերդում ցեղասպանութեան զոհերի յուշահամալիր կառուցելու որոշում կայացրեց։ Եւ այս վեհաշուք կոթողը դարձաւ մեր ժողովրդի յաւերժութեան ամենապերճախօս խորհրդանիշներից մէկը։*

*Այդ նոյն ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանութեան ճանաչմանն ուղղուած շարժում սկսուեց նաեւ հայկական սփիւռքի գաղթօճախներում։ Այդ շարժումը, որը տասնամեակներ շարունակ անձնուիրաբար ղեկավարում են սփիւռքի քաղաքական եւ հասարակական կառոյցները, հետեւողական եւ անխոնջ քայլերի շնորհիւ բազմաթիւ երկրներում պսակուեց յաջողութեամբ։*

*Հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչել են աշխարհի* 30 *երկրներ եւ մենք երախտապարտ ենք բոլոր այն պետութիւններին, միջազգային կառոյցներին, հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներին, ովքեր իրենց համերաշխութիւնն են յայտնում հայ ժողովրդին եւ ճանաչում ու դատապարտում Հայոց ցեղասպանութիւնը։*

*Սիրելի՛ հայրենակիցներ,*

*Այսօր մեր ժողովրդի զաւակներն աշխարհի բոլոր անկիւններում ոգեկոչում են Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերին։ Ինչո՞ւ մէկ դար անց չեն մարում մեր զգացմունքները, իսկ մեր սրտերում էլ աւելի վառ է այրւում յիշատակի ճրագը։*

*Պատասխանը պարզ է։ Անցել է մէկ դարից աւելի, սակայն չեն վերացուած Ցեղասպանութեան հետեւանքները։ Առ այսօր Թուրքիան կատարուածի համար որեւէ զղջում չի յայտնել, ներողութիւն չի հայցել։ Դա է պատճառը, որ մենք այսօր յայտարարում ենք՝ յիշում ենք եւ պահանջում։*

*Ընդ որում, Հայոց ցեղասպանութեան ճանաչումը մենք համարում ենք ոչ միայն մեր ազգային, այլեւ համամարդկային օրակարգի հարց, որովհետեւ Ապրիլի* 24*-ը ոչ միայն մեր անմեղ զոհերի խնկարկման օր է, այլ նաեւ մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն յանցագործութեան՝ ցեղասպանութեան եւ ցեղասպան գործողութիւնների մասին եւս մէկ անգամ բարձրաձայնելու, սթափութեան եւ ժխտողականութեան դէմ պայքարի կոչելու օր, ցեղասպանութեան եւ մարդկութեան դէմ ուղղուած այլ ծանրագոյն յանցագործութիւններից մարդկութիւնը պաշտպանելու՝ պետութիւնների պատասխանատուութեան վերահաստատման օր։*

*Ո՞րը պէտք է լինի ուրեմն, Ապրիլի* 24*-ից մեր հետեւութիւնը։*

*Առաջինը.* 1915 *թուականին երիտթուրքերի կառավարութեան կողմից հայ ժողովրդի նկատմամբ մահուան դատավճիռ է կայացուել, բոլոր ուժերը նետուել են այդ դատավճռի ի կատար ածմանը, մէկուկէս միլիոն հայի նկատմամբ այդ դատավճիռն ի կատար է ածուել, բայց հայ ժողովրդի նկատմամբ ի կատար ածել չի յաջողուել։*

*Մէկուկէս միլիոն մեր սրբադասուած նահատակները, ըստ այդմ, աւելի են ուժեղացրել ապրելու, արարելու, հզօրանալու, յիշելու եւ պահանջելու մեր կամքը եւ հայ ժողովուրդը յաղթել է մահուանը։*

*Երկրորդ եւ նոյնքան կարեւոր հետեւութիւնը հետեւեալն է. Նախորդ դարասկզբին մեր ժողովրդին նետուած մարտահրաւէրներն այսօր էլ գոյութիւն ունեն։ Եւ այդ մարտահրաւէրներից ոչ թէ մազապուրծ լինելու, այլ դրան արդիւնաւէտ դիմակայելու միակ միջոցն ու գործիքն ուժեղ պետականութիւնն է, հզօր պետութիւնը, այնպիսի Հայաստանը, որը պատրաստ է դիմակայել անվտանգութեան բոլոր սպառնալիքներին։*

*Այո՛, մենք չպէտք է ջանք խնայենք, որ մեր դաշնակիցների հետ մեր յարաբերութիւնները խորանան, դառնան աւելի ինստիտուցիոնալ եւ յուսալի, աշխարհում մեր դաշնակիցների թիւը շատանայ։ Բայց այսպիսի արդիւնքի հասնելու իրական հնարաւորութիւն կարող է ստեղծել միայն ինքնիրեն պաշտպանելու ընդունակ, արժանապատիւ եւ ինքնիշխան պետութիւնը։*

*Իսկ ինքնիրեն պաշտպանելու ընդունակ, արժանապատիւ եւ ինքնիշխան պետութիւն ունենալու համար մեզ հարկաւոր է ունենալ ժամանակակից բոլոր չափանիշներին համապատասխանող կրթական համակարգ, տինամիք զարգացող բարձր տեխնոլոգիական տնտեսութիւն, ռազմարդիւնաբերական կայացած համալիր, հզօր բանակ եւ յատուկ ծառայութիւններ, իսկ այսպիսի արդիւնքի հասնել հնարաւոր է միայն համահայկական ներուժի համախմբմամբ։ Համահայկական ներուժի Հայաստանի պետականութեան շուրջ համախմբման միջոցով, այնպիսի համախմբման միջոցով, որը կը դառնայ մեր պետականութեան գիտական, դիւանագիտական, տնտեսական առաջընթացի խթան ու երաշխաւոր։*

*Այս գործնական խնդիրը լուծելու համար մենք պէտք է կարողանանք ձեւակերպել մեր ազգային հայեցակարգը, մեր ազգային գաղափարախօսութիւնը, տեսլականը, որը համազգային համաձայնութիւն կը ձեւաւորի մեր ազգային արժէքների, ազգային նպատակների եւ ազգային ռազմավարութեան շուրջ, որը մեր ինքնութիւնը պաշտպանելու, պահպանելու, զարգացնելու, ժամանակակից աշխարհի եւ առաւել եւս վաղուայ աշխարհի պայմաններում էլ աւելի կենսունակ ու մրցունակ դարձնելու երաշխիքներ կը ստեղծի։*

*Առաջիկայում հէնց այսպիսի հայեցակարգի եւ ռազմավարութեան նախագիծ կը ներկայացնեմ համահայկական քննարկման։*

*Սիրելի՛ հայրենակիցներ,*

*Այս տարի Ապրիլի* 24*-ը մենք դիմաւորում ենք բացառիկ պայմաններում։ Նոր տիպի կորոնավիրուսի համավարակը բոլորիս դրել է աներեւակայելի մի իրավիճակում, երբ* 55 *տարի շարունակ տեղի ունեցող ապրիլքսանչորսեան երթը՝ հարիւր հազարաւոր քաղաքացիների մասնակցութեամբ՝ տեղի պիտի չունենայ, որովհետեւ դա համաճարակային ընթացիկ լարուած իրավիճակը չվատթարացնելու պարտադիր եւ անխուսափելի պայման է։*

*Նախ ուզում եմ շնորհակալութիւն յայտնել մեր բոլոր հայրենակիցներին՝ կառավարութեան այս որոշմանը ըմբռնումով վերաբերուելու համար։ Հարկ է արձանագրել, որ նմանատիպ իրավիճակում են նաեւ սփիւռքի մեր հայրենակիցները, ովքեր կրկին կորոնավիրուսի համավարակի պատճառով չեն իրականացնելու աշխարհի տարբեր երկրներում աւանդաբար տեղի ունեցող բազմահազարանոց երթերը, յիշատակի բազմամարդ միջոցառումները։*

*Բայց ճգնաժամային այս իրավիճակում մենք փորձել ենք գտնել ապրիլքսանչորսեան յիշատակի միջոցառումներին նոյնիսկ աւելի մեծ մաշտապ եւ ընդգրկում հաղորդելու հնարաւորութիւն, եւ այս տարի միլիոնաւոր մարդիկ աշխարհի տարբեր հատուածներից ապրիլքսանչորսեան երթին մասնակցելու հնարաւորութիւն կ՚ունենան, որովհետեւ այս տարի երթը տեղի կ՚ունենայ վիրտուալ տարածքում։*

*Եւ ուրեմն, կեցցէ՛ ազատութիւնը,*

*Կեցցէ՛ Հայաստանի Հանրապետութիւնը,*

*Կեցցէ՛ Արցախի Հանրապետութիւնը,*

*Կեցցէ՛ հայկական սփիւռքը,*

*Եւ կեցցե՛նք մենք եւ մեր երեխաները, որ ապրում ենք եւ ապրելու ենք ազատ եւ երջանիկ Հայաստանում։*

*Յիշում ենք եւ պահանջում»։*

## Գանատայի մօտ ՀՀ դեսպան Անահիտ Յարութիւնեանի ուղերձը Ցեղասպանութեան 105-րդ տարելիցի կապակցութեամբ

*Սիրելի՛ հայրենակիցներ,*

105 *տարի առաջ Օսմանեան կայսրութիւնը իրականացրեց հայ ժողովրդի ծրագրուած բնաջնջումն ու հայրենազրկումը։ Դա մի ոճիր էր, որն ուղղուած էր ոչ միայն հայութեան, այլեւ ողջ մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ։ Դա մի ոճիր էր, որ այդ ժամանակ դեռ անգամ անուն չունէր։ Հետագայում տրուած բոլոր ձեւակերպումները՝ միայն մասնակիօրէն են արտայայտում հայ ժողովրդի վերապրած ողբերգութիւնը, դրա ծաւալներն ու աւերիչ հետեւանքները։*

*Ցաւօք, համավարակի այս պայմաններում, ինչպէս ամենուր, այնպէս էլ Գանատայում մենք ստիպուած եղանք չեղարկել ծրագրուած բոլոր տեսակի ոգեկոչման արարողութիւններն ու միջոցառումները։ Սակայն այս իրողութիւնը ոչ մի կերպ մեզ չի կարող կաշկանդել եւ ետ պահել մեր արդարացի պահանջը բարձրաձայնելուց։*

*Ուստի որպէս Պետութիւն, որպէս* 20*-րդ դարասկզբի առաջին ցեղասպանութիւն վերապրած ժողովուրդ, մեր պարտքը պէտք է լինի հետեւողականօրէն պայքարել աշխարհում մարդկութեան դէմ իրագործուած ամենադաժան յանցագործութեան՝ ցեղասպանութեան բոլոր դրսեւորումների դէմ՝ ազգատեացութիւնից մինչեւ բնաջնջում, անտարբեր լռութիւնից, ատելութեան սերմանումից մինչեւ ժխտում։ Այս պայքարը մեզ է պարտադրում վերապրած ժողովրդի մեր կարգավիճակը։*

*Յիշատակի այս պահին՝ կը ցանկանայի վերահաստատել Հայաստանի եւ հայ ժողովրդի խորին երախտագիտութիւնը Գանատայի իշխանութիւններին եւ ժողովրդին՝ մեր պատմութեան ամենադաժան ժամանակահատուածում ցուցաբերած բացառիկ համերաշխութեան, եւ Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու եւ դատապարտելու համար։*

*Սիրելի հայրենակիցներ,*

*Այժմ առաւել քան երբեւէ մենք գիտակցում ենք, որ հայ ժողովրդի պատասխանը Հայոց եղեռն իրագործողներին եւ ժխտողներին պէտք է լինի ուժեղ, ժողովրդավար եւ բարեկեցիկ Հայաստանը՝ խարսխուած Հայաստան-Արցախ-Սփիւռք կուռ եռամիասնութեան վրայ։*

*Եւ այսօր մենք՝ որպէս այդ եռամիասնութեան վկայութիւն, եկէք մեր ձայնը միաւորենք աշխարհի բոլոր անկիւններում Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակների յիշատակը ոգեկոչողներին եւ մտովի ծաղիկներ խոնարհենք Ծիծեռնակաբերդի անմար կրակի մօտ։*

ԲԻՒՐՕ... Սկիզբը էջ 1

*քական համագործակցութեան պայմանագրի ստորագրումը, եւ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ ակտիւ քայլերի ձեռնարկումը։*

*Ակնկալում ու պահանջում ենք ՀՀ իշխանութիւններից բանակցային գործընթացում առաջնորդուել Արցախի ժողովրդի* 1991*թ. անկախութեան եւ հետագայ սահմանադրական հանրաքուէներով արդէն իսկ կայացած կամարտայայտութեամբ։*

*ՀՀ իշխանութիւնները պարտաւոր են պաշտօնապէս յայտարարել, որ սեղանին չկայ հակամարտութեան փուլային կարգաւորում ենթադրող փաստաթուղթ, որ Հայաստանը դա ստորագրելու արտաքին ճնշումների ենթակա չէ։*

*Միաժամանակ, հարկ ենք համարում արձանագրել, որ արտաքին ճնշումներին դիմակայելու միակ միջոցը համազգային համերաշխութիւնն է, որն ստեղծելու գլխաւոր պատասխանատուն ՀՀ իշխանութիւններն են. Արցախի հիմնահարցում, բոլո՛րս, ազգովի պատասխանատուութիւն եւ անելիք ունենք։*

**Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ**

# Ուիլսընի իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանը ճշդող միակ իրաւական փաստաթուղթն է. Կ. Մանոյեան

## Հարցազրոյց ՀՅԴ Բիւրոյի անդամ, ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեանի հետ

30-35 տարի առաջ հատուցումներու մասին կարելի է ըսել՝ բաւական բացասական տրամադրութիւն կար քաղաքական շրջանակներու մօտ: Հիմա այդ փոխուած է, եւ եթէ տակաւին ամբողջական դրական տրամադրութիւն չկայ, բոլորին համար պարզ է, որ Հայոց ցեղասպանութեան՝ Թուրքիոյ կողմէ ճանաչումը հարցի կարգաւորման գործընթացի միայն սկիզբը կրնայ ըլլալ, որովհետեւ հիմնական հարցը հատուցումներն են: Պէտք է նաեւ շեշտել, որ, միջազգային օրէնքի համաձայն, պայման չէ, որ Թուրքիան նախ ճանչնայ ցեղասպանութիւնը, եւ ապա մենք հատուցումներու հարց բարձրացնենք, թէեւ, բնականաբար, Թուրքիոյ կողմէ իր գործած յանցագործութեան ճանաչումը կը դիւրացնէ հատուցումներու հարցը իր հետ բարձրացնելուն:

– Յարգելի՛ ընկ. Մանոյեան, այս տարի լրանում է ցեղասպանութեան 105-րդ տարելիցը: Ինչպէ՞ս կարելի է գնահատել Հայ դատի ուղղութեամբ տարուող աշխատանքների վիճակը ներկայումս՝ նկատի ունենալով մասնաւորապէս ամիսներ առաջ ԱՄՆ Կոնկրէսի երկու պալատների եւ Սիրիայի խորհրդարանի կողմից մեծ ոճիրի ճանաչման եւ դատապարտման իրողութիւնները:

*– Նախ անհրաժեշտ է յստակեցնել կամ վերյիշեցնել ընթերցողներուն, որ Հայ դատի աշխատանքները չեն վերաբերիր միայն ցեղասպանութեան առնչուող հարցերուն՝ ճանաչում, դատապարտում եւ հատուցումներ. մեր՝ ՀՅԴ-ի Հայ դատի յանձնախումբերն ու նաեւ գրասենեակները որոշ պարագաներու նոյնիսկ առաւելաբար կը գործեն Հայաստանի Հանրապետութեան միջազգային վարկի բարձրացումին, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումին եւ արտաքին կապերու զարգացումին, Ջաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ: Բոլոր ուղղութիւններով աշխատանքներու ծաւալն ու չեշտադրումները կախեալ են տուեալ միջավայրի քաղաքական պայմաններէն: Ինչ կը վերաբերի ուղղակի Հայոց ցեղասպանութեան առնչուող հարցերուն, ապա պէտք է արձանագրել, որ յատկապէս Ձեր նշած վերջին դրական արդիւնքներէն ետք Թուրքիան բաւական դժուար կացութեան մէջ կը գտնուի, որովհետեւ այդ երկու երկիրներուն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ Սուրիոյ օրէնսդիր մարմիններուն կողմէ որդեգրուած՝ ցեղասպանութեան ճանաչումի կամ ճանաչումը վերահաստատող բանաձեւերը քաղաքական յատուկ նշանակութիւն ունին:*

*ԱՄՆ-ն կը հանդիսանայ Թուրքիոյ կարեւորագոյն դաշնակիցներէն մէկը, եւ այդ առումով անոր օրէնսդիր իշխանութեան երկու պալատներուն կողմէ որդեգրուած բանաձեւերը նաեւ պատգամ եւ ուղեցոյց են Թուրքիոյ միւս դաշնակիցներուն, անոնց, որոնք ցարդ նման բանաձեւեր կամ դիրքորոշում չունին, թէ կարելի է նման դիրքորոշում որդեգրել: Ինչ կը վերաբերի Սուրիոյ խորհրդարանի բանաձեւին, ապա այն յատկանշական է մի քանի առումներով. բանաձեւին ներածականին մէջ յստակ կը յիշուի Արեւմտեան Հայաստանը, երկրորդ՝ կը հաստատուի նաեւ, որ ցեղասպանութեան արարքներուն մէկ մասը գործադրուած է նոյնինքն Սուրիոյ տարածքներուն վրայ, եւ որպէս այդպիսին՝ Սուրիան ականատես իսկ է գործուած ոճիրին: «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» արդէն շուրջ 15 տարիէ ի վեր կը խօսի ցեղասպանութեան ճանաչումէն հատուցումներու խնդրին անցնելու անհրաժեշտութեան մասին, եւ այդ ուղղութեամբ առած ենք որոշ քայլեր: Արդէն, երբ յիսնամեակէն սկսաւ ցեղասպանութեան միջազգային ճանաչումի գործընթացը, նպատակը ի վերջոյ հատուցումներու հարցը բարձրացնելն էր, հատուցումներու հարցին բարձրացումին համար անհրաժեշտ քաղաքական մթնոլորտն ու ենթահողը պատրաստելն էր, յատկապէս՝ Պաղ պատերազմի միջազգային քաղաքական իրականութեան մէջ: Այժմ մէկ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումի փաստը աշխարհով մէկ, միւս կողմէն Հայաստանի անկախ հանրապետութեան գոյութիւնը ստեղծած են ցեղասպանութեան հատուցումներու հարցը բարձրացնելու թէ՛ քաղաքական ենթահողը եւ թէ՛ բազմաթիւ հնարաւորութիւններ հայ ազգին համար:*

– Այս հարցազրոյցը լոյս կ՚ընծայուի այն ժամանակահատուածում, երբ, հաստատուած աւանդոյթի համաձայն, ԱՄՆ նախագահը յայտարարութիւն կ՚անի Հայոց ցեղասպանութեան առիթով: Որո՞նք են մեր կանխատեսումները, եւ արդեօք այնքան ծանրակշի՞ռ են քաղաքական հակափաստարկները, որ չպէտք է ակնկալիքներ փայփայենք, թէ ամերիկեան բարձրագոյն իշխանական համակարգն այս տարի եւ մօտակայ ժամանակահատուածում կ՚ամբողջացնի իր յստակ դիրքորոշումը այս հարցում:

*– Ամերիկեան բարձրագոյն իշխանութիւնը միայն գործադիր իշխանութիւնը չէ. Միացեալ Նահանգներուն մէջ կայ իշխանութեան երեք՝ օրէնսդիր, գործադիր եւ դատական թեւերու փոխադարձ հակակշռումի սահմանադրական կարգ: Ճիշդ է, որ ԱՄՆ նախագահը, ով կը ղեկավարէ գործադիր իշխանութիւնը, նաեւ պետութեան գլուխն է, բայց Միացեալ Նահանգներու անունով խօսելու իրաւունքը միայն իրմով չէ սահմանափակուած: Հաշուի առնելով ԱՄՆ-ի օրէնսդիր իշխանութեան՝ Կոնկրէսի երկու պալատներուն վերջին բանաձեւերը, որոնց քիչ առաջ անդրադարձանք, այլեւս անառարկելի է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգները կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը, դեռ չեմ խօսիր 50-էն 49 նահանգներուն կողմէ տարբեր ձեւի ճանաչումի քայլերը, որոնք անպայման դրական քաղաքական մթնոլորտ ստեղծած են: Հարցն այն է, որ պէտք է ԱՄՆ-ի գործադիր իշխանութեան համար եւս այդ ճանաչումը միանգամընդմիշտ, անվերադարձ կերպով կատարուի, իսկ այդ ճանաչումը միայն նախագահին ուղերձով չի սահմանափակուիր. կարեւոր է, որ այն այլեւս մաս կազմէ գործադիր իշխանութեան հաստատագրուած քաղաքականութեան, որ բնականաբար կ՚ազդուի մէկ նախագահի դիրքորոշումէն, բայց ատով չի վերջանար: Այս ուղղութեամբ է, որ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը աշխատանք կը տանի: Վստահ եմ, որ ի վերջոյ հասնելու ենք այդ թիրախին, եւ այդ ճամբուն վրայ ԱՄՆ-ի այսօրուան նախագահին դիրքորոշումը, որ անցեալ մի քանի տասնամեակներուն սովորաբար կ՚արտայայտուի նախագահին տարեկան Ապրիլ 24-ի ուղերձով, բնականաբար ունի շատ կարեւոր նշանակութիւն: Այս ուղղութեամբ աշխատանքը գլխաւորաբար ամերիկահայութեան գործն է, բայց քանի որ հարցը կը վերաբերի ամբողջ հայ ժողովուրդի պատմութեան եւ իրաւունքներուն, բոլորս ոչ միայն ակնկալիք, այլ նաեւ ընելիք ունինք: Բոլորս ըսելով՝ թէ՛ պետութիւն, թէ՛ հայրենաբնակ եւ սփիւռքաբնակ հայութիւն՝ իրենց բոլոր թեւերով: Ձեր հարցումին պատասխանելով՝ ոչ միայն յուսահատելու պատճառ չունինք, ընդհակառակը՝ այս յաջողութիւնները նոր յաջողութիւններու դուռ կը բանան:*

– Իսկ առհասարակ ո՞ւր ենք հասել ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ կորուստների հատուցման ուղղութեամբ: Արդէն մի քանի տարի է, որ համապատասխան թղթածրար է պատրաստւում: Այս թղթածրարի նկատագիրն ի՞նչ է լինելու, գործնական ի՞նչ ընթացք է նախատեսւում մօտ ապագայի համար թղթածրարի հետապնդման առումով, եթէ ի հարկէ կան համապատասխան ծրագրեր, եւ կարելի է այդ մասին խօսել:

*– Թղթածրարը, որուն կ՚ակնարկէք, կ՚ենթադրեմ՝ կը վերաբերի Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով որդեգրուած համահայկական հռչակագրին մէջ նշուող թղթածրարին: Այդ հռչակագրին կէտերէն մէկը կ՚ըսէ. «Կ՚արտայայտէ Հայաստանի եւ հայ ժողովուրդի միասնական կամքը Հայոց ցեղասպանութեան փաստի համաշխարհային ճանաչման հասնելու եւ Ցեղասպանութեան հետեւանքներու վերացումի հարցով, որուն համար կը մշակէ հատուցումներու համապարփակ թղթածրար՝ դիտելով զայն անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքներու եւ օրինական շահերու վերականգնման գործընթացի մեկնարկ»: Այս թղթածրարի ուրուագիծը կայ նոյնինքն համահայկական հռչակագրին մէջ. օրին յատուկ աշխատանքային խումբ մը պատրաստեց նաեւ թղթածրարի նախագիծ եւ յանձնեց Հայաստանի Հանրապետութեան օրուան նախագահին: Այնուհետեւ Երեւանի մէջ տեղի ունեցան մի քանի հանդիպումներ՝ նախաձեռնութեամբ եւ համակարգումով Հայոց ցեղասպանութեան իրաւական հարցերի գիտավերլուծական կենտրոնին, այդ նախագիծին եւ այլ ուսումնասիրութիւններու հիման վրայ մէկ ամբողջական տարբերակ յառաջացնելու նպատակով: 2018-ի իրադարձութիւններէն ետք աշխատանքները դանդաղեցան: Յոյս ունիմ՝ շուտով կը վերսկսին: Այստեղ պէտք է յիշեմ նաեւ ՀՅԴ Բիւրոյի նախաձեռնութեամբ եւ պատուէրով խումբ մը հայ եւ օտար մասնագէտներու մասնակցութեամբ 2007-ին ձեւաւորուած Հայոց ցեղասպանութեան հատուցումներու ուսումնասիրութեան խումբի աշխատանքը: Այդ խումբին վերջնական եւ ամբողջական զեկոյցի անգլերէն բնագիրը հրապարակուեցաւ 2014-ի Սեպտեմբերին: Ցարդ հրապարակուած են այդ զեկոյցին ամբողջական եւ կամ համառօտ տարբերակները հայերէն, թրքերէն, ֆրանսերէն, սպաներէն, լեհերէն. շուտով կը հրապարակուի նաեւ արաբերէնով: Այս ուսումնասիրութիւնը տարբեր ակադեմական եւ քաղաքական հանրային քննարկումներու հիմնական ատաղձը եղած է եւ պիտի շարունակուի ըլլալ: Որոշ իմաստով այս խումբի աշխատանքը շարունակելու համար հիմնադրուեցաւ եւ ԱՄՆ-ի մայրաքաղաքին մէջ 2016-ին գրանցուեցաւ Արդարութեան եւ մարդկային իրաւանց հայկական իրաւական կեդրոնը, որուն հոգաբարձուներու խորհուրդին անդամ են տարբեր երկիրներէ մասնագէտներ եւ գործիչներ: Կարգ մը գործնական պատճառներով դանդաղած այս կեդրոնի աշխատանքն ալ նոր թափ ստանալու կարիք ունի: Յաճախ, երբ հատուցումներու մասին կը խօսուի, շատեր կը կարծեն, որ այդ միայն իրաւական-դատական գործողութիւններու միջոցով պիտի ըլլայ. այդպէս չէ, թէեւ նաե՛ւ դատական գործեր յարուցելն ալ այդ ամբողջ զինանոցին մաս կը կազմէ: Այդպէս չէ, որովհետեւ միջազգային օրէնքները տակաւին ամբողջապէս պատասխան չունին հայ ժողովուրդին դէմ գործադրուած այս ոճիրին համար հատուցումներու խնդիրներուն: Մէկ կողմէ միջազգային օրէնքները անընդհատ կը զարգանան, միւս կողմէ նման յանցագործութիւններու հատուցումի հարցերը շատ արդիական դարձած են: Հատուցումներու հարցով առնուած են շարք մը քաղաքական, իրաւական եւ ակադեմական քայլեր: Քաղաքականը կը վերաբերի յատկապէս Միացեալ Նահանգներու օրէնսդիր մարմնին՝ Կոնկրէսէն ներս կատարուող աշխատանքներուն, որոնցմէ գլխաւորը Ներկայացուցիչներու պալատին կողմէ 2011-ին որդեգրուած բանաձեւն է՝ Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած եկեղեցապատկան կալուածներու վերադարձի մասին: Նման բանաձեւ որդեգրուեցաւ նաեւ 2017-ին Գալիֆորնիոյ Ծերակոյտին կողմէ: Հատուցումներու մասին քաղաքական հրապարակային քննարկումներ եղած են նաեւ Եւրոխորհրդարանին եւ Ֆրանսիայի Ազգային ժողովին անդամներու մասնակցութեամբ Պրիւքսէլի եւ Փարիզի մէջ: Հատուցումներու շուրջ ակադեմական տարբեր համաժողովները Հայաստանէն Լիբանան, Արժանթին, Հոլանտա, Գանատա ու այլուր, ըստ էութեան, քաղաքական քննարկումներ են, որովհետեւ կը ծառայեն հարցի քաղաքական արծարծումին հող պատրաստելուն: 30-35 տարի առաջ հատուցումներու մասին կարելի է ըսել՝ բաւական բացասական տրամադրութիւն կար քաղաքական շրջանակներու մօտ: Հիմա այդ փոխուած է, եւ եթէ տակաւին ամբողջական դրական տրամադրութիւն չկայ, բոլորին համար պարզ է, որ Հայոց ցեղասպանութեան՝ Թուրքիոյ կողմէ ճանաչումը հարցի կարգաւորման գործընթացի միայն սկիզբը կրնայ ըլլալ, որովհետեւ հիմնական հարցը հատուցումներն են: Պէտք է նաեւ շեշտել, որ, միջազգային օրէնքի համաձայն, պայման չէ, որ Թուրքիան նախ ճանչնայ ցեղասպանութիւնը, եւ ապա մենք հատուցումներու հարց բարձրացնենք, թէեւ, բնականաբար, Թուրքիոյ կողմէ իր գործած յանցագործութեան ճանաչումը կը դիւրացնէ հատուցումներու հարցը իր հետ բարձրացնելուն: Տարբեր տեսակի ու չափի հատուցումներու հետ կապուած որոշ դատական գործեր յարուցուած են Միացեալ Նահանգներու եւ Թուրքիոյ մէջ. վերջինը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ՝ Սիսի կաթողիկոսարանի կալուածին վերադարձի հարցով: Դատական բնագաւառին մէջ եւս անհրաժեշտ է աշխատանքներու համադրումը:*

«Դրօշակ», թիւ 4 (1638), Ապրիլ 2020

ՀՈՐԻԶՈՆ www.horizonweekly.ca

horiZon
ARMENIAN WEEKLY
VOL. 25 No. 48-9 (1277-8) APRIL 27 - MAY 4, 2020

# Virtual pilgrimage to Dzidzernakaberd bring Armenians together

YEREVAN—A virtual pilgrimage to the Dzidzernagapert Armenian Genocide Memorial Complex took place on April 24, with Armenians from all over the world taking part in the innovative event by texting their names to a specified number, and seeing them displayed on the columns of the monument.

Armenia's Office of the High Commissioner of Diaspora Affairs announced the initiative on the previous day, and urged Armenians from around the world to participate.

Public Radio of Armenia reported that 653,797 names were projected on the columns, during a special virtual concert that was scheduled to last until dawn.

Armenia officially kicked off the 105th anniversary commemorative events at 11 p.m. local time on April 23 when church bells across Armenia tolled for three continuous minutes, and street lights were turned off in Yerevan and other regions. Raphael Patkanian's famed song, "Come My Nightingale" (Ari im sokhak) played across the country as Armenians directed their collective gaze to the Dzidzernagapert memorial hill, from where a purple light shot up to illuminate the night sky in the nationwide—and collective—commemoration of the Armenian Genocide.

# Armenia, Artsakh leaders commemorate Armenian Genocide

YEREVAN—In lieu of the annual procession of government officials to the Dzidzernagapert Armenian Genocide Memorial Complex, this year each leader separately made the pilgrimage there to honour the victims of the Armenian Genocide and to assert the imperative of the international recognition of the crime.

President Armen Sarkissian, Prime Minister Nikol Pashinyan and his spouse Anna Hakobyan, National Assembly Speaker Ararat Mirzoyan and Armenia's High Commissioner for Diaspora Affairs Zareh Sinanyan were among the leaders to visit Dzidzernagapert and pay their respects.

In Artsakh, President Bako Sahakian visited the Armenian Genocide memorial in Stepanakert and issued a statement. Also issuing a statement was Artsakh's president-elect Arayik Harutyunyan.

# President Sarkissian proposes a more historically inclusive Dzidzernakaberd

YEREVAN—Armenia's President Armen Sarkissian is proposing the construction of a vast park on the grounds of the Dzidzernagapert Armenian Genocide Memorial Complex in an effort to make it more historically inclusive.

In addition to suggesting the planting of 1.5 million trees to represent the Martyrs of the Genocide, he also proposed that the park be sectioned to represent the provinces of Western Armenia, the Diaspora and present-day Armenia.

# Trump tightens Turkey's grip over White House policy

WASHINGTON—In the wake of last year's near-unanimous recognition of the Armenian Genocide by the U.S. House and Senate, President Donald Trump has chosen to close out his first term in office — isolated and alone — as the last remaining American enforcer of Ankara's gag-rule against honest U.S. remembrance of this crime, a move sharply condemned by the Armenian National Committee of America.

For four straight years, President Trump failed to properly condemn as 'genocide' the Ottoman Turkish government's annihilation of millions of Armenians, Greeks, Assyrians, Chaldeans, Syriacs, Arameans, Maronites and other Christians in his annual April 24th commemorative statement — despite having campaigned on a promise to stand up for persecuted Christians and other at-risk faith-based groups around the world.

"Armenian Genocide denial is a policy manufactured in Ankara, exported to America, and enforced in Washington by President Trump," said Armenian National Committee of America ANCA Executive Director Aram Suren Hamparian. "Once again, President Trump copied and pasted the transparently euphemistic, patently offensive April 24th evasions issued by Barack Obama and his other predecessors — essentially isolating his Administration as the last major American co-conspirator in Turkey's obstruction of justice for the Armenian Genocide."

"Despite last year's near-unanimous Congressional recognition of the Armenian Genocide, President Trump has, once again, granted Turkish President Erdogan — an openly anti-American dictator — a veto over honest U.S. remembrance of Turkey's WWI-era genocide of millions of Armenians and other Christians."

# With over 15,000 viewers and strong support from the Prime Minister, party leaders and elected officials, Canadians commemorated the Armenian Genocide virtually

OTTAWA — Due to the restrictive circumstances caused by the COVID-19 pandemic, this year's Armenian Genocide commemoration events were organized differently.

Canadians were invited to join a live broadcast organized by the Armenian National Committee of Canada (ANCC) and the Armenian Youth Federation of Canada (AYF Canada).

The virtual commemoration was broadcast live via ANCC's social media accounts and drew over 15,000 viewers from different parts of the country, reported the ANCC.

"We were tremendously pleased with the high number of viewership and despite the ongoing challenges related to COVID-19, we were happy that we were able to create this one-time opportunity for Canadians to commemorate this very important historic event" said Hrag Tarakdjian, co-president of the ANCC.

During the broadcast, Prime Minister Justin Trudeau addressed thousands of Canadians with an unprecedented strong message sent to the ANCC, and the entire Armenian-Canadian community, upholding Canada's principled stance on the recognition of the Armenian Genocide, condemning the Ottoman Turkish Empire's crime against humanity and reminding everyone to not remain indifferent in the face of hate and discrimination.

The leader of the Official Opposition and the Conservative Party of Canada, the Hon. Andrew Scheer addressed the commemoration as well, sending a powerful message of genocide remembrance and condemnation, while pledging his party's strong support to the Armenian community.

Leaders of the Bloc Québécois (Yves-François Blanchet) and the New Democratic Party of Canada (Jagmeet Singh) also sent commemorative messages. Furthermore, eleven cabinet ministers, two provincial leaders — Premier Doug Ford of Ontario and Premier Jason Kenney of Alberta — and over 50 federal and provincial parliamentarians and municipal representatives issued commemorative statements, standing in solidarity with the Armenian-Canadian community.

"The amount of support and solidarity we have received both from our elected officials and the general public is truly overwhelming and a strong testament to the ongoing advocacy work spearheaded by the ANCC" said Shahen Mirakian, co-president of the ANCC.

The commemoration also featured a short documentary segment featuring Canada's humanitarian response to the Armenian Genocide, moving testaments from the youth, messages from Armenia's ambassador to Canada, HE Anahit Harutyunyan, community leaders and the head of the Armenian Church in Canada, Archbishop Papken Tcharian.

"Remembering is simply not enough. While we remember, we are committed to continuing our struggle to demand justice and reparation for the Armenian Genocide and we look forward to continuing our collective work to achieve those goals" concluded Tarakdjian and Mirakian.

# It is important to honour the memory of 1.5 million Armenians who lost their lives during the genocide'

## BRYAN MAY, CHAIRMAN OF THE CANADA- ARMENIA PARLIAMENTARY FRIENDSHIP GROUP

CAMBRIDGE—On April 21, Nazeeg Haneshian, Senior Correspondent of Horizon Weekly, had a virtual interview with Hon. Bryan May, Member of Parliament for Cambridge, who has been the Chair of the Canada-Armenia Parliamentary Friendship Group since 2017.

In the meeting Bryan May provided updates regarding the current pandemic, and shared his gratitude to the local Armenian Community that has been responsive and taking all necessary measures at this time. He suggested resources available to the community, acknowledging the efforts of all those on the front lines, including public servants, local essential workers and the leadership of Prime Minister Trudeau.

Bryan May shared his message to the Armenian Community as we approach April 24, "It's important we continue to honour the memory of over 1.5 million Armenians that lost their lives during the genocide." This year will not be different as "people will come together to share their stories and compassion," although it may not be physically this year.

At the close of the meeting, Hon. May encouraged everyone to reach out to family, friends and anyone that may be physically alone at this time — to remind them that although we are physically distant, there are many tools to keep us all socially connected.

# 'Like you, we will bear witness'

## ALBERTA PREMIER JASON KENNEY

EDMONTON—Alberta Premier Jason Kenney issued this statement in remembrance of the Armenian Genocide:

"A horrific new chapter in human suffering began 105 years ago when the Ottoman government launched the systematic deportation and extermination of Armenians.

"No one was spared. More than one million people — men and women, children and the elderly — were slaughtered outright or died from forced marches and disease. This mass murder was accompanied by robbery, rape and starvation on a massive scale.

"Genocide has deeply scarred the Armenian people. It is imperative that we, and all free peoples, preserve the memory of the atrocities inflicted on them.

"To all Albertans of Armenian descent, we join you in profound grief for the families destroyed and the history lost. Like you, we will not forget. Like you, we will bear witness."

# Artsakh President-elect meets with ARF Central Committee

STEPANAKERT—Artsakh's president-elect Arayik Harutyunyan on April 22 met with the chairman of the Armenian Revolutionary Federation Artsakh Central Committee Davit Ishkhanyan, with the participation other members of the ARF body.

At the start of the meeting Ishkhanyan congratulated Harutyunan on his election on his and Artsakh ARF's behalf.

Harutyunyan explained that the meeting with the ARF, at his invitation, was part of his overall outreach to political forces working in Artsakh. The ARF will be represented in the soon to be convened National Assembly.

The participants of the meeting exchanged views on ways to overcome challenges that have arisen during this time of global crisis.

The president-elect emphasized the unique and important role the ARF has played in state-building efforts in Artsakh and in effort to confront the challenges facing the republic.

The sides agreed that such meetings to exchange views and become acquainted with each other's approaches would take place in the future.

Also taking part in the meeting were the head of the "Homeland" bloc parliamentary faction Artur Tovmasyan, the spokesperson of Harutyunyan's "Free Homeland" party, Vahram Poghosyan, as well as ARF Artsakh Central Committee members Vahram Balayan, Artur Mosiyan and Ara Poulouzian, the editor of Aparaj newspaper, which is the official publication of ARF Artsakh.

## A Mari Usque Ad Mare

### FEDERAL GOVERNMENT COMMITS AN ADDITIONAL $1.1B FOR COVID-19 VACCINE

On April 23 Prime Minister Justine Trudeau held a press conference during which he announced an additional $1.1-billion in federal funding for COVID-19 research and vaccine development. Prime Minister Trudeau said that the need for understanding the virus and further testing is deemed necessary and crucial before re-opening up Canadian economy.

Prime Minister Trudeau said that alongside all the health measures that Canada has in place now, and with Canada being on the right track, "we need to be thinking not just about the next weeks, but about the next months." This is where the funding being put forth by the federal government will be key.

The funding will be split into three different areas. Firstly, $115-million more will be put forth for research, developing and production of vaccines and treatments in Canada. Trudeau hopes this additional funding will be able to offset the supply and demand struggle that Canada faced with personal protective equipment in the early stages of this pandemic. The second area, that $662-million will be put into is for research projects on how brain and airway cells are affected by COVID-19. Additionally this portion of the funds will be used for extensive clinical trials. The final portion of the fund, $350-million will be designated for national testing, modelling, data-monitoring and the tracking of COVID-19 in Canada.

"The better we understand this virus, its spread and its impact on different people, the better we can fight it and eventually defeat it," said Prime Minister Trudeau.

### OVER $200 MILLION FOR VULNERABLE CANADIANS

Amid the COVID-19 pandemic millions of more dollars will be going out to vulnerable Canadians. In a press conference Prime Minister Justin Trudeau announced a couple of new programs that will be helping women's shelters, Indigenous services and the Reaching Home program. These new funds will be an addition to the already promised $157-million that is being used to address homeless needs in the country.

$40-million will be invested in women's shelters and sexual assault centres across the country. This funding will be given to Women and Gender Equality Canada where a designated $26-million will be used immediately to address the needs of 575 violence against women shelters. $4-million will be given to the Canadian Women's Foundation to help fund the sexual assault centres across the country. An additional $10-million has been designated to the Indigenous Services Canada which will used to support and fund the 46emergency Indigenous women and children's shelter on reserves and in the Yukon.

Executive Director of Women's Shelters Canada Lise Martin said that the timing of the funding was "crucial for shelters and the women and children they support. We are committed to getting these funds to shelters and transition houses as quickly and easily as possible. We know that shelters were already struggling with high demand and a lack of funding before the pandemic."

Trudeau said that this funding is here to help communities buy things like physical barriers or renting new spaces to keep people safe amid the coronavirus outbreak. "The communities that need this funding have now been identified, and money is getting to them," said Trudeau. "For people from Victoria to Hamilton, and Regina to St. John's, help has arrived."

### PREMIERS TO DECIDE HOW AND WHEN ECONOMY REOPENS.

During a press conference on April 25, Prime Minister Justine Trudeau said: "the provinces will have a lead role in determining how their economies reopens." Leaving It up to the Premiers of the provinces to take initiative and decide how and when they take the next steps.

Two days earlier, Saskatchewan Premier Scott Moe said that "we have to find the middle ground that continues to keep our case numbers low and keep Saskatchewan people safe while at the same time allowing for businesses to reopen and Saskatchewan people to get back to work."

New Brunswick Premier Blaine Higgs, on day later, said that "with the knowledge we have today of the virus and how it spreads, it would not be appropriate for us to suggest that we were in position to do anything other than to prevent mass gatherings and to ensure we didn't have a huge breakout in our community and in our province. Let's hope that innovation takes over and things will look differently next year at this time, but at this stage, we're basing the decisions on the facts we have."

Also on April 25, Ontario Premier Doug Ford, said "there's no one that wants to open up the economy more than I do but we are going to do it responsibly through the guidance of our chief medical officer of health."

"Canadians can take comfort in the fact that all of our orders of government have been working together in a very strong and aligned way," said Prime Minister Trudeau.

ISHKHAN GHAZARIAN

# Lavrov calls for 'liberating' lands, Yerevan says 'no concessions'

MOSCOW, YEREVAN—As the foreign ministers of Armenia and Azerbaijan were preparing to hold a virtual meeting with the participation of the OSCE Minsk Group Co-chairs on April 21, a disagreement was brewing between Moscow and Yerevan, when Russia's Foreign Minister Sergey Lavrov claimed that the negotiating sides were moving toward a phased, or stage-by-stage, approach to settle the Karabagh conflict.

Speaking at a virtual roundtable on April 21, Lavrov said that the negotiating sides were actively discussing a conflict settlement that proposed during a meeting in Moscow last year between the foreign minister of Armenia and Azerbaijan, Zohrab Mnatsakanyan and Elmar Mammadyarov.

"There are Madrid principles, there are documents prepared by the Russian Federation in 2010-2011, the so-called Kazan document. There are projects that were distributed in April last year in Moscow at the meeting of the Ministers of Foreign Affairs of Russia, Armenia and Azerbaijan with the participation of the Co-Chairs, and they are now being actively discussed," Lavrov said, implying that the an eventual settlement of the conflict will be done in a phases—or stage-by-stage—approach.

Lavrov went a step further in his remarks by saying that "assuming at the first stage the solution of the most pressing problems, which are the liberation of a number of areas around Nagorno-Karabagh and the unlocking of transport, economic and other communications."

"I am convinced that when we come to the decision to sign these documents, it will be the most important step in the implementation of the resolutions of the UN Security Council, which are in question and which, once again, demanded to stop the war and start negotiating," added Lavrov. "We started to negotiate, we need to agree now. This is what we are achieving as Co-Chairs of the OSCE Minsk Group."

Mnatsakanyan said that Lavrov, in his remarks, had made references to myriad documents "including documents which were discussed during the last two years. These approaches came up in 2014 and 2016 and they are unacceptable for the Armenian sides."

"There have been and will not be concessions. The Armenian sides will never exercise that approach," added Mnatsakanyan.

"Since 2018, the talks on the Karabagh conflict have been limited to the discussion and assessment of approaches which the sides exercised during specific times. The option of settlement, suggested in 2014, is not on the negotiating table now. We have expressed our position clearly, stating that security is the priority for the Armenian sides," explained Mnatsakanyan. "We have expressed our stance and our approaches very clearly."

The Armenian foreign minister also added that the principle of self-determination was a key factor being presented by Armenia during the negotiations.

"Those who think that it is possible to negotiate one thing and present something else to the the public are mistaken. No decision can be made without the people of Artsakh," emphasized Mnatsakanyan.

# Any given proposal for a resolution to the conflict must include the recognition of Artsakh's independence

**YEREVAN—The ARF Bureau issued the following statement regarding Russian FM Lavrov's remarks:**

The Bureau of the Armenian Revolutionary Federation expresses its concern over statements made by the Russian Foreign Minister today [April 21] at this juncture of the Artsakh (Karabagh) conflict peace negotiations. The ARF Bureau is also concerned that the Russian Foreign Minister's statements were made hours before the foreign ministers of Armenia and Azerbaijan were scheduled to hold a virtual meeting.

Any given proposal for a resolution to the conflict must include the recognition of Artsakh's independence. There must be parity in any agreement between the sides and it must be reached concurrently.

It is imperative that all approaches are realized through succinct vision, which in that regard include the signing of the strategic-political cooperations agreement between the republics of Artsakh and Armenia, as well as taking active steps toward the international recognition of the Artsakh Republic.

We anticipate and demand from Armenia's authorities that in the negotiation process they be guided the 1991 declaration of independence by the people of Artsakh and subsequent constitutional referenda as an expression of their free will.

The Armenian government must officially announce that there is no document on the table that calls for the phased approach to the conflict resolution and Armenia will not sign such an agreement under external pressures.

At the same time, we find it imperative to state that the only way to confront external pressures is through national accord and harmony. the establishment of which solely lies on the shoulders of Armenia's authorities. All of us, as a Nation, bear responsibility and have work to do for the Artsakh issue.

ARF BUREAU

*April 21, 2020*

# ANCC partners to provide 1.6 million meals to the needy

BY BERYL WAJSMAN, *"The Suburban"*

MONTREAL—Armenian National Committee of Canada (ANCC) is urging the Armenian-Canadian community to make donations to La Tablée des Chefs project "Les Cuisines Solidaires" —which will provide 1.6 million meals to food banks across Canada with the help of different partners, in memory of the 1.5 million innocent victims of the Armenian Genocide.

"Yes hishum yem yev pahanjum yem — I remember and demand." This is the slogan of the Armenian Genocide Remembrance Movement...

On April 24th we remember the Armenian Genocide. Every year there is a remarkable outpouring of Montrealers to commemorate the Armenian Genocide. Some marches in recent years in Montreal had over 10,000 participants including representatives of some two dozen cultural communities. Raphael Lemkin, the brilliant international jurist who coined the word genocide and authored the basis of the Genocide Convention, called the Armenian Genocide the "first genocide of the 20th century." [...] Lemkin didn't want anyone to forget the Armenian Genocide nor the Jewish Holocaust itself.

In light of the ongoing spread of the coronavirus, this year's March has of course been cancelled. But Armenian National Committee of Canada (ANCC) is urging the Armenian-Canadian community to make donations to La Tablée des Chefs project "Les Cuisines Solidaires" — which will provide 1.6 million meals to food banks across Canada with the help of different partners, in memory of the 1.5 million innocent victims of the Armenian Genocide. All donations are tax deductible and can be made online at : www.tableedeschefs.org

Hrag Tarakdjian and Shahen Mirakian, co-presidents of the ANCC issued a statement that reads, "We are proud of our partnership with this great organization and we strongly believe that as the Armenian-Canadian community is preparing to mark the 105th anniversary of the Armenian Genocide under the current difficult circumstances, it is our duty to help our fellow Canadians who are most in need, in honour of our 1.5 million victims"

Jean-François Archambault, Managing Director and Founder of La Tablée des Chefs responded that, "We are proud to partner with the ANCC and the Armenian community across Canada, in order to mark the 105th anniversary of the Armenian Genocide. Seeing the serious impacts of the crisis in our communities, we looked for a way to help people and imagine a great implication of leaders and actors of the agrifood sector. The response to our call was immediate: in less than a week, we mobilized generous public and private partners, received confirmations from chefs across the province and the support of many stakeholders in the agrifood industry!"

ԼՈՌԻ - ՋԱՒԱԽՔ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

## ԿԱՆԳՆԻՆՔ ԼՈՌԻԻ ԵՒ ՋԱՒԱԽՔԻ ԿՈՂՔԻՆ

Գուգարաց աշխարհը կը կազմէ Հայաստանի հիւսիսային պարիսպը, ըլլալով պատմական մեր շարք քաղաքակրթութիւններուն հիմնաքարը։ Ջաւախքի և Լոռիի շրջանները այսօր ալ կը հանդիսանան հայոց հիւսիսային պատուարը և անոնց հզօրութիւնը երաշխաւորն է Հայաստան աշխարհի ամրութեան և ամրապնդման։

Հ.Յ.Դ. Գանատայի շրջանի Լոռիի և Ջաւախքի օժանդակութեան յանձնախումբը տարիներով ի վեր կը գործէ Հայաստանի հիւսիսային պարիսպի ամրապնդման ի խնդիր։ Մեր հայրենակիցներու անսակարկ օժանդակութեամբ ցարդ իրականացուած են բազմաթիւ ծրագիրներ և պիտի շարունակենք նորանոր աշխատանքներով սատարել այդ կենսական շրջաններու ամրապնդման և հզօրացման։



2018 Մայիս, բացում Լոռիի մարզի Վանաձորի վերանորոգուած ՀՅԴ Ակումբի



2019 Օգոստոս, Ախալքալաքի երիտասարդական կեդրոնի վերանորոգում։ Ախալքալաք, Ախալցխա եւ Նինոծմինդայի կեդրոններու ծրագիրներ Ջաւախքի մէջ։



2011-էն ի վեր ամեն տարի, Հ.Յ.Դ. Գ.Լ.Շ.-ը կը կազմակերպէ ամառնային պատանեկան ճամբարներ Լոռիի մարզին մէջ։

☐ Այո, կը փափաքիմ զօրակցիլ Լոռի Մարզի եւ Ջաւախքի ծրագիրներուն
Yes, I would like to participate and support the Lori region and Javakhk programs

Name
Address
City
Province
Postal Code

Home Phone
Cell Phone
Business Phone
E-mail Address

I would like to donate:
☐ $ 100
☐ $ 250
☐ $ 500
☐ $ 1000
Other ☐ $ ________

My donation is enclosed:
☐ Cash
☐ Cheque

Address:
Lori-Javakhk Committee
Armenian Community Centre of Montreal
3401 Rue Olivar-Asselin
Montreal, Quebec, Canada, H4J 1L5


IT'S TIME TO TOYOTA



The all-new 2020 RAV4 LE FWD

LEASE AT
*$91
FOR 60 MONTHS
260 PAYMENTS

SUGGESTED PRICE OF
$30,404^

The all-new 2020 COROLLA L CVT

LEASE AT
*$63
FOR 60 MONTHS
260 PAYMENTS

SUGGESTED PRICE OF
$22,934^

